

## ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԿ

Լ. ՄԵԼԻՔԸ ԵԹԸ ԲԵԿԻ ԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր ստացած մասնաւոր տեղեկութիւններից իմանում ենք, որ Թիֆլիսի վրաց համալսարանի հայագիտութեան պատուցապետ Լեւան Մելիքսեբքէզեանը ապագրութեան է յանձնել կամ արդէն լոյս է ընծայել հետեւեալ աշխատութիւնները.

1.- Նոր սիւթեր Տփղիսի 1795 թ. աւելացն եւ Սայեաթ Նովայի առասպեկտական «նահատակութեան» մասին - շարք երեք տպագրական թերթ, որ հըրատարակում է երեւանի համալսարանի ժողովածում: Յօդւածը հիմնած է հեղինակի Հաղպատի վանքում յայտնագործած անտիպ վաներագրերի եւ այլ նիւթերի վրա, որոնց մէջ կան Սայեաթ Նովայի ձեռքավ գրւած եւ 1796-798 թականները կրող հայերէն ու վրացերէն գրութիւնները: Այս փաստով իմէնին արդէն հերքում է Սայեաթ Նովայի «նահատակութեան» առասպելը եւ հաստատում այն տեսակէոր, որ «Վէմում» արձարծել էր մեր աշխատակից Յ. Զարեկանը:

2.- Սայեաթ Նովայի ստեղծագործութեան գրական - ժողովրդական աղբիւրները. («Գրական Ժառանգութիւն» վրացերէն ժողովածու, հատոր Ա.)

3.- Սայեաթ Նովայի երգերի ամբողջական հաւաքածու - վրացերէն քարգմանութիւն, բնագրի չափով: (Հրատարակութիւն վրաց համալսարանի):

4.- Եռնա հելլչվելին Հայաստանում եւ Սայեաթ Նովան - վրացերէն: (Վըրաց քանգարանի ժողովածուի մէջ, հատոր Դ.):

5.- Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին երկրորդ հասոր. (ԺԿ - ԺԸ դար): Հրատ. Մելքոնեան Փրետի:

6.- Ակադ. Ն. Մարի յիշատակին Արւիրած երկու յօդւած. 1) «Մառը եւ Հայագիտութիւնը», 2) «Մառը եւ նիւթական մշակոյթի պատմութիւնը» - լոյս են տեսնելու վրաց համալսարանի Ն. Մարի յիշատակին նիւրած ժողովածուում:

7.- Ակադի Մերևուլին Հայոց գրականութեան մէջ - նոյն համալսարանի կողմից Ա. Ներեւելիի մահեան համամետակի առքիւ հրատարակած վրացերէն ժողովածուում:

8.- «Մերալիտեկ մշակոյթը Վրաստանում» - վրացերէն մենագրութիւն եւ այլում: Հրատ. Մերելի թանգարանի:

9.- Շամչի Մելքո - ժողովածու, որի մէջ մտնում են Սայեաթ Նովայի ժամանակակից եւ հետեւող Շամչի Մելքո աշուղի 7 վրացերէն եւ 14 հայերէն երգերը: Տրում է նաև հայերէն երգերի վրացերէն բարգմանութիւնը:

10.- Ստեփանոս Օքքելեանի պատմաւթեան վրացերէնը:

11.- Դաւիթ Ռէկտոր (18-րդ դարի վրացի գրող) - Վրաստանին սահմանակից երկրների նկարագրութիւնը (վրացերէն): Հայաստանին վերաբերող մասը կը մտնէ «Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին» Մելքոնեան հրատարակութեան երկրորդ հասորի մէջ:

Բացի Մելիքսերքի աշխատութիւններից, լոյս է տեսել վերջինիս աշակերտ հայագիտութեան ամբիոնի երիտասարդ դասախոս վրացի Իլիա

Արաւածէի «Հայկական Քրեստումատիա» հատորը՝ ժերականական աղիւսակներով եւ հայ - վրացերէն բառաբանով:

### «ՅԱՌԱԶ»-Ի ՏԱՄԱՍՄԵՍԿԸ

Օգոստ. 2-ին լրացաւ «Յառաջ» օրակարի տասնամեսակը: Տասը տարի առաջ, համեստ պայմաններում, սկսւց այս գործը, իրեւ փոքրաւալ երկօրեայ թերը: 17 ամիս անցած, 1927-ի սկիզբը, արդէն օրաքերը էր: Խակ մի ժամի տարի յետոյ աւելացաւ եւ ծաւալը: Այսօր «Յառաջ»-ն արդէն մեծածաւալ ժողովրդական լրագիր է, որ առաջնակարգ տեղ է գրաւում հայ մամուլի ընտանիքում: Նրա շուրջ համայնքարութեած են ոչ միայն ֆրանսայի, այլ եւ բռվանդակ Հայ Սփիտքի մտաւորական բազմարիւ գրիշները: Նրա յայտնած կարծիքներին ականջ են դժուու ոչ միայն գաղափարակիցները, այլև հակառակը հոսանքների մարդիկ: Իր-

բեւ Հ. Յ. Դաշնակցութեան Ար. Եւրապայի կենտր. Կոմիտէութեան թերան՝ «Յառաջ»-ը չի սահմանափակւում միայն իր կուսակցութեան շրջանակով, այլ բարիս բուն նշանակութեամբ համաժողովրդական թերը է՝ հայ ազգային ժաղաքականութեան եւ մշակոյթի, հայ ընկերային ու տնտեսական կեանքի ջանազովն ու դրօշակիրը: Տասնամեսակի առթիւ արտայայտուած համակրանքի այնքան իմենքուույն զգացմունքները պարզ ապացոյցներ են, որ խմբագիր Շ. Միսաքեանի եւ նրա մերձաւոր աշխատակիցների քափած տասնամեայ ջամփերը ապարդիւն չեն անցել. «Յառաջ»-ը այսօր հայ կեանքի ամերաժեշտ մէկ գործօնն է:

### «ՅՈՒՍԱԲԵՐ»-Ի ՆՈՐ ԲԱՑԱՌԻԿԸ

Աստւածաշնչի թարգմանութեան 1500 ամեակի կապակցութեամբ «Յուսաբեր» որոշել է հրատարակել բացառիկ մի թիւ՝ ֆիրմաւսին նուրած բացառիկի ձեւով: Թիւը լոյս է տեսնելու այս տարւայ վերջը եւ պարունակելու է բազմազան նիւթեր՝ հայ հին ու

նոր մշակոյթի բնագաւառից: Աշխատակիցներին առաջարկւած է 60 անուն նիւթը՝ հայ ազգի ցեղային ծագումից սկսած մինչեւ Հայաստանի Խորհրդային օրերը: Յօդւածների առաքման իրեւ վերջնական բական նշանակուած է նոյնեմբեր 15: